ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԼՈՅԱՆ ԿԱՐՈ ԱՇՈՏԻ

# ՄԵՍԽԵԹՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

**Է.00.02 – «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ - 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Չոբանյան Պ. Ա.
պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Մաիլյան Բ. Վ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
Հակոբյան Ա. Հ.
պատմական գիտությունների թեկնածու,
Շաքարյան Ա. Կ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. օգոստոսի 8-ին, ժամը $12^{00}$-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Համաշխարհային պատմության 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. հունիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու ՄԱՐԳԱՐՅԱՆ Գ. Ա.

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Մեսխեթցի թուրքերը թյուրքալեզու մահմեդականներ են, որոնք բնակվում էին ժամանակակից Վրաստանի հարավային շրջաններում՝ Սամցխեում և մասամբ Ջավախքում: XX դարի կեսերին, խորհրդային իշխանությունների որոշմամբ նրանց աքսորեցին միջինասիական հանրապետություններ: ԽՍՀՄ կազմալուծումից հետո մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի հարցը սրվեց, ինչի հետևանքով պաշտոնական Թբիլիսին ստանձնեց նրանց հայրենադարձության կազմակերպման պարտավորությունը: Քանի որ Սամցխե-Ջավախեթին Հայաստանին սահմանակից տարածք է և ունի պատմական հայկական ստվար բնակչություն, ուստի մեսխեթցի թուրքերի հնարավոր վերադարձը նշված շրջաններ ուղղակիորեն առնչվում է նաև Հայաստանի և հայ ժողովրդի կենսական շահերին: Հաշվի առնելով այս ամենը, անհրաժեշտություն կա ուսումնասիրել նշված հիմնահարցի դրսևորումները Վրաստանի ներքին և արտաքին քաղաքականության մեջ, որպեսզի պարզենք, թե ինչ շահեր ունի Վրաստանը և ինչքանով է հնարավոր Վրաստան և մասնավորապես Սամցխե ու Ջավախք մեսխեթցի թուրքերի զանգվածային վերադարձը: Այս հարցի ուսումնասիրումը ունի նաև կարևոր գիտական արժեք: Չնայած խնդրի ակտիվ քննարկումներին, մինչ այժմ մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի նկատմամբ Վրաստանի վարած քաղաքականության բազմակողմանի ուսումնասիրություն չի կատարվել: Մինչդեռ նման հետազոտությունը թույլ կտա բազմակողմանի գնահատել ստեղծված իրավիճակը, բացահայտել խնդրի վերջնական կարգավորմանն արգելակող իրական պատճառները, ինչպես նաև ավելի լավ պատկերացնել իրադարձությունների հնարավոր հետագա զարգացման տարբերակները:

Ոչ պակաս կարևոր է ուսումնասիրել մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը նաև տարածաշրջանի միջազգային հարաբերությունների սուբյեկտների աշխարհաքաղաքական շահերի համատեքստում: Այդ խնդիրը վերջին երեք տասնամյակի ընթացքում գտնվում է Վրաստանի և նրա հարևանների ուշադրության կենտրոնում, որոնցից յուրաքանչյուրը փորձում է հարցն օգտագործել իր համար նպաստավոր լուծում ստանալու նպատակով: Հայաստանի համար խնդրի հետազոտման կարևորությունն ավելի է մեծանում, հիմնահարցում Թուրքիայի և Ադրբեջանի, ակտիվ ներգրավվածության և հակահայկական տրամադրությունների պատճառով:

Թեև մեսխեթցի թուրքերի մասին մեկ անգամ չէ, որ գրել են, սակայն այդ հրապարակումներից այնքան էլ պարզ չէ, թե ի՞նչ է իրենից ներկայացնում բուն հիմնահարցը: Որպես կանոն հեղինակների զգալի հատվածը շեշտը դնում են մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի վրա: Սակայն գոյություն ունեն նաև այլ արժեքավոր տեսակետներ և փաստարկներ: Ուստի անհրաժեշտ է կատարել հիմնահարցի բազմակողմանի վերլուծություն:

Հարկ է նշել, որ մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի հարցը սկսել են ակտիվ կերպով քննարկել դեռևս հետստալինյան տարիներին՝ կապելով այն տվյալ հանրույթի ծագման խնդրի հետ: Վերջինս դարձել է մի կողմից վրացի և մյուս կողմից թուրք ու ադրբեջանցի հասարակական և գիտական շրջանակների կովախնձորներից մեկը, ինչի հետևանքով առաջացած պատմագիտական վեճերը հաճախ տանում են պատմության զեղծարարությանը: Այս առումով անհրաժեշտ է կատարել մեսխեթցի թուրքերի ծագման անաչառ ուսումնասիրություն:

Ելնելով վերոնշյալից, արդիական է դառնում ուսումնասիրել և վերլուծել մեսխեթցի թուրքերի ծագումը, հիմնախնդրի առաջացումն ու ներկա դրությունը, նրա դրսևորումները Վրաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ, ինչպես նաև պարզել այս հարցում տարածաշրջանի երկրների աշխարհաքաղաքական շահերը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը և նրա դրսևորումները Վրաստանի քաղաքականության մեջ: Հետազոտական նպատակներին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել ժամանակակից Վրաստանի հարավային շրջաններ թյուրքախոս տարրի ներհոսքի և տեղի բնակչության մահմեդականացման գործընթացը:
- Ներկայացնել տարածաշրջանում Սամցխեի ու Ջավախքի էթնո-դավանական կազմն ու ժողովրդագրական փոփոխությունները Ռուսական կայսրության տիրապետության հաստատումից մինչև մեսխեթցի թուրքերի աքսորը:
- Քննարկել մեսխեթցի թուրքերի էթնոկրոնական հանրույթի ինքնության հարցը:
- Ներկայացնել մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի առաջացման պատճառները և ընթացքը ստալինյան վարչակարգի բռնաճնշումների համատեքստում:
- Վեր հանել տարբեր երկրներում բնակվող մեսխեթցի թուրքերի առջև ծառացած խնդիրները, որոնք նույնպես պետք է ընկալել իբրև նրանց հիմնախնդրի բաղադրիչներ:
- Հիմնավորել, որ Վրաստանի հետխորհրդային իշխանությունները մեսխեթցի թուրքերի տուն դարձի հարցը շահարկել են իրենց արտաքին քաղաքականության ասպարեզում, իսկ ներքին քաղաքականության մեջ՝ օգտագործել այն ջավախահայության դեմ:
- Բացահայտել Վրաստանի հարևան երկրների աշխարհաքաղաքական շահերը՝ կապված մեսխեթցի թուրքերի հիմնահարցի հետ և դրանցից բխող քաղաքականությունը մեսխեթցի թուրքերի նկատմամբ:
- Լուսաբանել մեսխեթցի թուրքերի հայրենադարձությանը խոչնդոտող գլխավոր պատճառները:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Ատենախոսությունում առաջին անգամ համակողմանի և հետևողականորեն ուսումնասիրվել և վերլուծվել է մեսխեթցի թուրքերի և նրանց հիմնախնդրի նկատմամբ Վրաստանի իշխանությունների վարած քաղաքականությունը: Ցույց է տրվել, որ պաշտոնական Թբիլիսին շահարկել է հիմնախնդիրն իր արտաքին քաղաքականության ասպարեզում բարենպաստ եղանակ ստեղծելու համար: Հատկանշական է, որ հիմնահարցը օգտագործվել է նաև Ջավախքի հայության շահերի դեմ:

Պարզվել է նաև հիմնախնդի առնչությունը տարածաշրջանի ներքին և արտաքին դերակատարների աշխարհաքաղաքական շահերին: Մասնավորապես, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից մեսխեթցի թուրքերի հարցը դիտարկվում է առաջին հերթին հենց այս համատեքստում: Վերլուծվել է նաև մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի դեպքում Հայաստանի և հայ ժողովրդի համար հնարավոր բացասական հետևանքները:

Աշխատանքում, ի տարբերություն այլ հեղինակների, փորձ է կատարվել դիտարկել հիմնախնդիրը որպես տարբեր երկրներում բնակվող մեսխեթցի թուրքերի առջև ծառացած մարտահրավերների ամբողջականություն: Այնուամենայնիվ, Վրաստանի պարագայում հիմնախնդիրը գլխավորապես առնչվում է նրանց հայրենադարձությանը: Գնահատական է տրվել նաև մեսխեթցի թուրքերի հասարակական կազմակերպությունների գործունեությանն ու արդյունավետությանը:

Ելնելով հիմնախնդրի բնույթից, կատարվել է նաև մեսխեթցի թուրքերի կազմավորման բազմաբովանդակ ուսումնասիրություն, վերլուծելով ինչպես այս ուղղությամբ արդեն կատարված իրարամերժ հետազոտությունները, այնպես էլ այս հարցին ուղղակի կամ անուղղակի առնչվող սկզբնաղբյուրները: Առաջ է քաշվել այն տեսակետը, որ մեսխեթցի թուրքերի կազմավորմանը մասնակցել են բացի վրացիներից և թյուրքական ծագում ունեցող ցեղերից նաև այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչները՝ այդ թվում հայերը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:** Վրաստանի պատմության հետխորհրդային շրջանի ժամանակահատվածի շուրջ գիտական հանրության մեջ ընդհանուր մոտեցում չկա: Հեղինակների մի մասն այն համարում է դեռ չավարտված, ընկալելով որպես խորհրդային շրջանին հաջորդող փուլ: Ուսումնասիրողների մյուս մասը հակված է հետխորհրդային շրջանն ավարտել 2003 թ. նոյեմբերին տեղի ունեցած Վարդերի հեղափոխությամբ: Վերջին տեսակետն հիմնավորվում է նրանով, որ Վրաստանը վերջնականապես հրաժարվեց նախկին ԽՍՀՄ տարածքում ընթացող ինտեգրացիոն գործընթացներից, որդեգրեց եվրաատլանտյան կառույցներին անդամակցելու քաղաքականությունը: Շրջադարձային վերափոխումներ տեղի ունեցան նաև երկրի ներքին կյանքում, ուստի՝ սա հիմք է տալիս մտածելու, որ վրացի ժողովուրդը վճռականապես մերժեց իր նախկին կապը խորհրդային ժառանգության հետ: Ընդ սմին, ժամանակագրական առումով

ատենախոսությունը գլխավորապես ընդգրկում է իրադարձությունները 1991 թվականից, երբ Վրաստանը հռչակեց իր անկախությունը, մինչև ներկա ժամանակաշրջանը, քանի որ մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի հարցում՝ Վարդերի հեղափոխությունից հետո, պաշտոնական Թբիլիսիի դիրքորոշման և քաղաքականության մեջ էական փոփոխություններ չնկատվեցին: Հիմնախնդրի առաջացման պատճառներն ու նրա բովանդակությունը բազմակողմանի և ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է եղել ուսումնասիրել նաև մեսխեթցի թուրքերի կազմավորման պատմությունը և դրա շուրջ ձևավորված իրարամերժ վարկածները, ինչպես նաև XX դարի երկրորդ կեսին տվյալ հանրույթի նկատմամբ խորհրդային իշխանությունների վարած քաղաքականությունը: Արդյունքում աշխատանքի ժամանակագրական շրջանակներն ընդլայնվել են՝ սահմանելով որպես ստորին շեմ XVI դ. սկիզբը, երբ Վրաստանի հարավային շրջանները հայտնվեցին Օսմանյան կայսրության տիրապետության տակ:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ:** Ատենախոսության մեթոդաբանական հիմքում են ընկած պատմականությունը, գիտական անաչառությունը, ինչպես նաև համակարգային մոտեցումը: Տարաբնույթ աղբյուրների և գրականության նկատմամբ ցուցաբերվել է քննական մոտեցում, համեմատվել և վերլուծության են ենթարկվել նաև իրարամերժ տեսակետներն ու տեղեկությունները՝ կապված մեսխեթցի թուրքերի ծագման, նրանց թվաքանակի և այլ հարցերի շուրջ:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Տվյալ աշխատանքը կարող է կիրառական նշանակություն ունենալ ինչպես մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի և Վրաստանի քաղաքականության, այնպես էլ՝ տարածաշրջանի էթնո-դավանական կազմի և ժողովրդագրական փոփոխությունների ուսումնասիրության համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել գիտահետազոտական նպատակներով, միջազգային հարաբերությունների, քաղաքագիտության, ազգագրության բնագավառներում: Ջավախքի պատմությամբ հետաքրքրվող մասնագետները նույնպես կարող են հենվել այս աշխատության առանցքային դրույթների վրա:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի «Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության» ու «Քրիստոնյա Արևելքի» բաժինների կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակված հոդվածներում:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:** Մեսխեթցի թուրքերի ծագման և պատմության վրացական վարկածն ուսումնասիրելու համար առավել կարևոր նշանակություն ունի

վրացի պատմաբան Շ. Լոմսաձեի մենագրությունը[1], որը վրացական տեսակետն արձարծող առաջին գիտական աշխատություններից մեկն է: Ժամանակակից վրացի և այլազգի հեղինակները, որոնք մեսխեթցի թուրքերին համարում են մահմեդականացած վրացիներ, գերազանցապես հենվում են նրա աշխատության վրա: Ծագման վրացական վարկածը ներկայացվել է նաև Զ. Ճիճինաձեի, Գ. Մամուլիայի, Լ. Բարաթաշվիլու և Կ. Բարաթաշվիլու աշխատանքներում[2]: Մեսխեթցի թուրքերի ծագման թյուրքական վարկածն առավել մանրամասն ներկայացված է Յ. Զեյրեքի և Ա. Յունուսովի աշխատություններում[3]: Մեսխեթցի թուրքերի ծագման հարցը բավականին անաչառ ուսումնասիրվել է Ա. Օսիպովի, Է. Պանեշի և Լ. Երմոլովի հոդվածներում[4]:

Մինչ Օսմանյան իշխանության հաստատումը Սամցխեի և Ջավախքի բնակչության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդվում վրացի արևելագետ Ս. Ջիքիայի՝ օսմաներենից վրացերեն թարգմանված «Գյուրջիստանի վիլայեթի մեծ գրանցամատյանը»[5]: XVI դարի վերջից մինչև XIX դարի սկիզբը ժամանակակից Վրաստանի հարավային շրջանների բնակչության մահմեդականացման և այնտեղ թյուրքերենի տարածման մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում տարածաշրջան այցելած ճանապարհորդները[6], ինչպես նաև այդ ժամանակաշրջանում բնակվող վրացի աշխարհագրագետ և պատմաբան Վախուշտի Բագրատիոնը[7]:

---

[1] **ლომსაძე შ.,** სამცხე-ჯავახეთი (XVIII საუკუნის შუაწლებიდან XIX საუკუნის შუაწლებამდე), „მეცნიერება“, თბილისი, 1975.

[2] **ჭიჭინაძე ზ.,** ქართველთ გამაჰმადიანება, ანუ ქართველთ გათათრება, თბილისი, ელექტრო-მბეჭდავი სტამბა არ. მ. კერესელიძისა, 1915; **ჭიჭინაძე ზ.,** ქართველთ მაჰმადიანთა ცხოვრება, თფილისი, მსწრაფლ-მბეჭდავი სტამბა ვ. რუხაძისა, 1916; **Мамулия Г.,** Концепция государственной политики Грузии в отношении депортированных и репатриированных в Грузию месхов. История и современность, - «Центральная Азия и Кавказ», 1999, № 1(2) - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (22.12.2018); **Бараташвили Л., Бараташвили К.,** Мы – месхи, - «Литературная Грузия», 1988, № 9, с. 98-146.

[3] **Zeyrek Y.,** Ahıska bölgesi ve Ahıska Türkleri, Ankara, 2001; **Zeyrek Y.,** Ahıska araştırmaları, Ankara, Kozan Ofset, 2006; **Юнусов А.,** Ахыскинские (Месхетинские) турки: дважды депортированный народ, - «Центральная Азия и Кавказ», 1999, № 1(2) - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_20_junusov.shtml (15.10.2018).

[4] **Осипов А. Г.,** О происхождении месхетинцев, - Археология и этнография понтийско-кавказского региона, Вып. 1, Краснодар, Кубанский гос. университет, 2013, с. 107-154; **Панеш Э. Х., Ермолов Л. Б.,** Месхетинские турки, - «Вопросы истории», 1991, № 9-10, с. 212-217.

[5] **ჯიქია ს.,** გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წ. 2, თბილისი, საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის გამომცემლობა და სტამბა, 1941.

[6] **Эвлия Челеби,** Книга путешествия, Вып. 3, Москва, 1983; **Шарден Ж.,** Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Пер. **Е. В. Бахутовой** и **Д. П. Носовича**, Тифлис, 1902; **Гильденштедт И. А.,** Географическое и статическое описание Грузии и

XIX դարում Սամցխեի և Ջավախքի տարածքում բնակվող էթնիկ և կրոնական խմբերի մասին տեղեկություններ են հաղորդում Օ. Եվեցկին, Պ. Զուբովը, Լ. Զագուրսկին, Պ. Ուվարովան և Ա. Խախանովը[8]: Առավել հետաքրքրական է վերջինիս աշխատությունը, որտեղ նա մանրամասն ներկայացնում է մահմեդականների ավանդույթները, հավատալիքները, մշակույթը: Ընդգրկուն տեղեկություններ ենք ստացել վիճակագրական բնույթի աղբյուրներից[9]: Առավել արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 1897 թ. անցկացված Ռուսական կայսրության առաջին համընդհանուր մարդահամարը[10], որտեղ հնարավորություն ենք ստացել համեմատել գավառների բնակչությունն ըստ լեզվի և կրոնի:

Հարավային Կովկասում ցարական և խորհրդային իշխանությունների վարած ազգային քաղաքականությունը ներկայացնելու համար օգտվել ենք Վ. Դյակինի և Յ. Բաբերովսկու աշխատություններից[11]: 1918-1921 թթ. ընթաց-

---

Кавказа из путешествия г-на академика И. А. Гильденштедта через Россию по Кавказским горам в 1770, 71, 72 и 73 годах, Императорская Академия наук, Санкт-Петербург, 1809.

[7] **ვახუშტი,** აღწერა სამეფოსა საქართველოსა, რედ. თ. ლომოური, ნ. ბერძენიშვილი, თბილისი, სტალინის სახელობის თბილისის სახელმწიფო უნივერსიტეტის გამომცემლობა, 1941.

[8] **Евецкий О.,** Статистическое описание Закавказского края, Санкт-Петербург, Типография Штаба отдельного корпуса внутренней стражи, 1835; **Зубов П. П.,** Картина Кавказского края, принадлежащего России и сопредельных оному земель в историческом, статистическом, этнографическом, финансовом и торговом отношениях, ч. 4, Санкт-Петербург, Типография Конрада Винеберга, 1835; **Загурский Л. П.,** Этнологическая классификация кавказских народов (Извлечено из рукописного труда). Приложение к Кавказскому календарю на 1888 год, Тифлис, 1887; **Уварова П. С.,** Кавказ. Путевые заметки. Абхазия, Аджара, Шавшетия, Посховский участок, ч. 2, Москва, Высоч. утв. Тов-во Скоропечатни А.А. Левенсон, 1891; **Хаханов А.,** Месхи (Этнографический очерк), - Этнографическое обозрение, 1891, № 3; с. 1-39.

[9] Сборник сведений о Кавказе, т. 1, Под ред. **Н. Зейдлица**, Тифлис, Типография Главного управления наместника Кавказского, 1871; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 года, Типография И. Мартиросиянца, 1893; Пространство и население губерний и областей Кавказского края к 1-ому января 1914 г. (коренное и временно проживающее), - Кавказский календарь на 1915 год, Тифлис, Канцелярия Кавказского наместника, 1914, с. 242-245; Всесоюзная перепись населения 1926 г., т. 14, отд. I, Москва, ЦСУ СССР, 1929.

[10] Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года. Тифлисская Губерния, т. LXIX, Изд-во Центрального статистического Комитета Министерства внутренних дел, 1905, с. 92-93.

[11] **Дякин В. С.,** Национальный вопрос во внутренней политике царизма (XIX - начало XX вв.), Санкт-Петербург, «Лисс», 1998; **Баберовски Й.,** Цивилизаторская миссия и национализм в Закавказье: 1828-1914гг., - Новая имперская история постсоветского пространства, Казань, Центр исследований национализма и империй, 2004.

քում Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում մահմեդականների ըմբոստություններին և տեղի ունեցած այլ իրադարձությունների ուսումնասիրության համար կարևոր նշանակություն է ունեցել 1919 թ. Վրաստանի կառավարության հրատարակած փաստաթղթերի ժողովածուն[12]: Այդ շրջանի պատմությունը մանրակրկիտ ներկայացված է նաև հայ պատմաբանների՝ Ա. Մելքոնյանի և Բ. Մաիլյանի աշխատություններում[13]:

Մեսխեթցի թուրքերի ինքնության ձևավորման և փոփոխության խնդիրների առավել մանրամասն ներկայացրել են Ա. Խազանովը, Մ. Թեթրաձեն, Մ. Բերիձեն և Մ. Կոբաիձեն, Ա. Այդընգյունը[14]: Նշված հանրույթի մշակույթի, ինքնության ներկայացման համար օգտակար է եղել Ա. Այդընգյունի և մի շարք համահեղինակների աշխատանքը[15]:

Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի ուսումնասիրության համար գիտական մեծ արժեք են ներկայացնում Թ. Թրիերի մի շարք այլ հեղինակների հետ համահեղինակությամբ հրատարակված աշխատությունները[16], որոնցում ներկայացված է հիմնահարցի առաջացումը, զարգացման ընթացքը, ներկա դրությունը: Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը բավականին օբյեկտիվ վերլուծել է նաև վրացի պրոֆեսոր Վ. Մոդեբաձեն[17]:

---

[12] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, Типография Правительства Грузинской Республики, 1919.

[13] **Մելքոնյան Ա.,** Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ-97», 2003; **Մաիլյան Բ.,** Ազգային հարցը և հայերի կացությունը Վրաստանի Հանրապետությունում (1918-1921 թթ.), Երևան, «Գիտություն», 2016; **Маилян Б. В.,** Между Грузией и Турцией: особенности ирредентизма на примере Аджарии и Самцхе-Месхетии (1918-1921 гг.), Историческое пространство. Проблемы истории стран СНГ, Москва, 2015.

[14] **Khazanov A.M.,** Meskhetian Turks in Search of Self-identity, - Central Asian Survey, 1992, Vol. 11, № 4, p. 1-16; **Tetradze M.,** Language planning policies and Migration: A case study on Meskhs Deported from Georgia in 1944, - TCD Working Papers in Linguistics, 2016, Vol. 1, p. 125-136; **Beridze M., Kobaidze M.,** An attempt to Create an Ethnic Group: Identity Change Dynamics of Muslimized Meskhetians, - "Language, History and Cultural Identities in the Caucasus conference" conference, Malmö University, June 17-19, 2005, p. 53-67; **Aydıngün A.,** Creating, recreating and redefining ethnic identity: Ahiska/Meskhetian Turks in Soviet and post-Soviet contexts, - Central Asian Survey, 2002, Vol. 21(2),185-197.

[15] **Aydıngün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.,** Meskhetian Turks An Introduction to their History, Culture and Resettlement Experiences, Washington DC, Central Applied Linguistics, 2006.

[16] **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.,** Meskhetians Homeward Bound..., ECMI – Caucasus, Georgia, 2011; **Pentikainen O., Trier T.,** Between Intedration and Ressetlement: The meskhetian Turks, European Centre for Minority Issues, 2004; **Trier T., Khanzhin A.,** The Meskhetian Turks at a Crossroads: Integration, Repatriation or Resettlement?, Berlin, LIT Verlag, 2007.

[17] **მოდებაძე ვ.,** მესხური პრობლემის ანალიზი, თბილისი, „კალმოსანი“, 2010.

Մեսխեթցի թուրքերի արտաքսման պատճառների, ընթացքի և աքսորվածների թվաքանակի բացահայտման համար կարևոր նշանակություն ունեն ռուսաստանցի պատմաբան Ն. Բուգայի հրատարակած արխիվային նյութերի ժողովածուները և մենագրությունը, ինչպես նաև Գ. Գոլդբերգի հրատարակած հոդվածում տեղ գտած փաստաթղթերը[18]։

Մեսխեթցի թուրքերի կացությունը միջինասիական հանրապետություններում և նրանց շարժման ձևավորման մասին տեղեկություններ ենք քաղել Պ. Պոլյանի, Ն. Բուգայի, Ռ. Սեֆերովի և Ա. Աքըշի աշխատություններից[19]։ Նշված հեղինակների մի մասն անդրադառնում են նաև Ֆերգանայի դեպքերին և փորձում են վերլուծել դրանք։ Այդ առումով բավականին մանրամասն վերլուծություն են կատարում Է. Պանեշը և Լ. Երմոլովը[20]։ Խորհրդային Միության, Վրաստանի և Ռուսաստանի Դաշնության ընդունած որոշումները մեսխեթցի թուրքերի իրավունքների վերականգնման ուղղությամբ ուսումնասիրվել են Ա. Ուսմանովի հոդվածում[21]։

Մեսխեթցի թուրքերի տեղաշարժի (միգրացիայի) ուղղությունները և կացությունը ներկայիս բնակության վայրերում ուսումնասիրվել է Ա. Այդընգյունի և Ի. Այդընգյունի, Խ. Դևրիշևայի, Զ. Քարամանի և Դ. Մյուրսիլի կողմից[22]։ Ս. Սվերդլովը և Ա. Օսիպովը քննադատության են ենթարկում ՌԴ

---

[18] **Бугай Н. Ф.,** Турки из Месхетии: долгий путь к реабилитации (1944–1994), Москва, Изд. дом «РОСС», 1994; **Бугай Н. Ф.,** Иосиф Сталин – Лаврентию Берия: «Их надо депортировать…»: документы, факты, комментарии, Москва, «Дружба народов», 1992; **Бугай Н. Ф.,** Л. Берия – И. Сталину: «Согласно вашему указанию…», Москва, «Аиро-ХХ», 1995; **Гольдберг Г.,** О проблемах «турок-месхетинцев». (Исторический аспект), - «Центральная Азия», 1998, № 2(14), - https://www.ca-c.org/journal/14-1998/st_09_goldberg.shtml (29.11.2018).

[19] **Полян. П.,** Не по своей воле… История и география принудительных миграций в СССР, Москва, «ОГИ-Мемориал», 2001; **Бугай Н. Ф.,** Проблемы возвращения «плановых переселенцев» в районы прежнего проживания до 1940-ых гг., - Вестник Калмыцкого института гуманитарных исследований РАН, 2014, № 4, с. 43-53; **Seferov R., Akış A.**, Sovyet Döneminden Günümüze Ahıska Türklerinin Yaşadıkları Cografyaya Göçlerle Birlikte Genel Bir Bakış, - Selçuk Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, 2008, Sayı 24, s. 393-411.

[20] **Панеш Э. Х., Ермолов Л. Б.,** Турки-Месхетинцы (историко-этнографический анализ проблемы), - Советская этнография, 1990, № 1, с. 16-24:

[21] **Усманов А. О.,** К вопросу о конституционно-правовой реабилитации месхетинских турок: политико-правовой аспект, - Гуманитарные и юридические исследования, 2017, № 3, с. 195-166.

[22] **Aydıngün A., Aydıngün İ.,** Ahıska Türkleri ulusötesi bir topluluk - ulusötesi aileler, Ankara, Ahmet Yesevi Üniversitesi, 2014; **Devrisheva Kh.,** Ahıska Türklerinin bitmeyen göcü, - Selçuk Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, 2019, Sayı 45, s. 333-352; **Karaman Z. T., Mursül D.,** Meskhetian (Ahiska) Turks in Turkey and Their Perception of Spatial Belonging, - Open Journal of Social Sciences, 2018, Vol. 8, p. 88-103.

իշխանությունների վարած քաղաքականությունը և կոչ անում փոխել իրենց վերաբերմունքը[23]: Մեսխեթցի թուրքերի հասարակական կազմակերպությունների ուսումնասիրության համար օգտվել ենք արդեն հիշատակված տարբեր աղբյուրներում առկա տեղեկություններից և Ն. Բուգայի և Մ. Մամաևի հոդվածից[24]:

Վրաստանի քաղաքականության ուսումնասիրության հարցում առավել կարևոր նշանակություն ունեն 1991 թվականից ի վեր ընդունված որոշումները: Դրանց թվում են երկրի արտաքին քաղաքականությունը ձևավորող և նրա իրականացմանը միտված Վրաստանի իշխանությունների նախաձեռնությամբ ընդունված բռնաճնշումների ենթարկված անձանց և խմբերի (այդ թվում մեսխեթցի թուրքերի) իրավունքների վերականգնումը նախատեսող փաստաթղթերը՝ «Արտաքսված և Վրաստան հայրենադարձված մեսխերի իրավական և սոցիալական խնդիրների լուծման պետական ծրագրի հաստատման մասին Վրաստանի նախագահի հրամանագիրը»[25], «Քաղաքական բռնաճնշումների զոհերի և արդարության վերականգնման մասին օրենքը»[26], «Վրաստանի հանրային կյանքի վիճակի, պետական ինքնիշխանության և անվտանգության հաստատման, տարածքային ամբողջականության վերականգնման հայեցակարգը»[27], 2005 թվականին ընդունված «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգը»[28]: Այդ փաստաթղթերի թվում են նաև Միջազգային կազմակերպությունների և հիմնախնդրով հետաքրքրված պետությունների ճնշման տակ ընդունված մեսխեթցի թուրքերի հայրենա-

---

[23] **Swerdlow S.,** Understanding Post-Soviet Ethnic Discrimination and the Effective Use of U.S. Refugee Resettlement: The Case of the Meskhetian Turks of Krasnodar Krai, - California Law Review, 2006, Vol. 6 (94), p. 1834; **Osipov A.,** Recent Developments Concerning the Meskhetian Turks in Krasnodar Krai. 2006-2007 // Humans Right Centre "Memorial", Russia, 2007 - http://old.memo.ru/hr/discrim/meshi4/MTS%20in%20KK.HTML (13.01.2019).

[24] **Бугай Н. Ф., Мамаев М. И.,** Международное общественное объединение турок-месхетинцев «Ватан» как институт власти гражданского общества, - Историческая и социально-образовательная мысль, 2015, т. 7, № 8, с. 22-29.

[25] დეპორტირებული და საქართველოში რეპატრიირებული მესხების სამართლებრივ და სოციალურ პრობლემათა გადაჭრის სახელმწიფო პროგრამის დამტკიცების შესახებ საქართველოს პრეზიდენტის ბრძანებულება - https://matsne.gov.ge/ka/document/view/109186?publication=0 (23.02.2019).

[26] საქართველოს მოქალაქეთა პოლიტიკური რეპრესიების მსხვერპლად აღიარებისა და რეპრესირებულთა სოციალური დაცვის შესახებ საქართველოს კანონი - https://matsne.gov.ge/ka/document/view/31408?publication=11 (09.01.2019).

[27] საქართველოს საზოგადოებრივი ცხოვრების მდგომარეობის, სახელმწიფოებრივი სუვერენიტეტისა და უსაფრთხოების განმტკიცების, ტერიტორიული მთლიანობის აღდგენის კონცეფცია - http://www.parliament.ge/files/387_616_475426_38.pdf (23.02.2019).

[28] საქართველოს ეროვნული უსაფრთხოების კონცეფცია (2005) - https://www.matsne.gov.ge/ka/document/view/43156?publication=0 (25.02.2019).

դարձությունը կազմակերպելու նպատակ ունեցող նորմատիվ իրավական ակտերը՝ «XX դարի 40-ական թվականներին ԽՍՀՄ կողմից Վրաստանի ԽՍՀ-ից բռնի արտաքսված անձանց հայրենադարձության մասին օրենքը»[29], «Հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձանց Վրաստանի քաղաքացիության շնորհման պարզեցված ընթացակարգի մասին Վրաստանի կառավարության որոշումը»[30], «XX դարի 40-ական թվականներին ԽՍՀՄ կողմից Վրաստանի ԽՍՀ-ից բռնի արտաքսված անձանց հայրենադարձության մասին Վրաստանի օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Վրաստանի օրենքը»[31], «Հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձանց պարզեցված կարգով Վրաստանի քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ» Վրաստանի կառավարության որոշումը[32], «XX դարի 40-ական թվականներին ԽՍՀՄ կողմից Վրաստանի ԽՍՀ-ից բռնի արտաքսված անձանց հայրենադարձության մասին պետական ռազմավարության հաստատման մասին Վրաստանի կառավարության որոշումը»[33]:

Վրաստանի արտաքին քաղաքականությունում մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի դրսևորումներն ուսումնասիրելու հարցում կարևոր նշանակություն ունեն նաև այս հարցին առնչվող միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերը և Վրաստանի եվրաատլանտյան կառույցներին ինտեգրվելու ժամանակ ստորագրված հետևյալ փաստաթղթերը՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեա ներկայացված Եվրոպական ազգային փոքրամասնությունների դաշնապետական (ֆեդերալիստական) միության (FUEN) դիմումը[34], Եվրոպական խորհրդին անդամակցելու

---

29 ყოფილი სსრკ-ის მიერ XX საუკუნის 40-იან წლებში საქართველოს სსრ-იდან იძულებით გადასახლებულ პირთა რეპატრიაციის შესახებ საქართველოს კანონი - https://matsne.gov.ge/ka/document/view/22558?publication=7 (26.02.2019).

30 რეპატრიანტის სტატუსის მქონე პირთა მიერ საქართველოს მოქალაქეობის გამარტივებული წესით მიღების შესახებ საქართველოს მთავრობის დადგენილება - https://www.matsne.gov.ge/ka/document/view/4096?publication=0 (26.02.2019)

31 საქართველოს კანონი „ყოფილი სსრკ-ის მიერ XX საუკუნის 40-იან წლებში საქართველოს სსრ-იდან იძულებით გადასახლებულ პირთა რეპატრიაციის შესახებ" საქართველოს კანონში დამატებებისა და ცვლილებების შეტანის თაობაზე - https://www.matsne.gov.ge/ka/document/view/90742?publication=0 (27.02.2019).

32 რეპატრიანტის სტატუსის მქონე პირთა მიერ საქართველოს მოქალაქეობის გამარტივებული წესით მიღების შესახებ საქართველოს მთავრობის დადგენილება - https://www.matsne.gov.ge/ka/document/view/4096?publication=0 (26.02.2019)

33 საქართველოს მთავრობის განკარგულება ყოფილი სსრკ-ის მიერ XX საუკუნის 40-იან წლებში საქართველოს სსრ-იდან იძულებით გადასახლებულ პირთა რეპატრიაციის შესახებ სახელმწიფო სტრატეგიის დამტკიცების შესახებ - https://matsne.gov.ge/ka/document/view/2509406?publication=0 (22.03.2019).

34 Written statement on repatriation of Meskhetian Turks to Georgia, submitted by the NGO Federal Union of European Nationalities - https://www.ecoi.net/en/file/local/1236549/1930_1443084042_g1520228.pdf (27.02.2019).

Վրաստանի դիմումը[35], Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) ընդունած թիվ 1257[36], 1415[37], 1428[38], 1477[39], 1603[40], 1801[41], 2015[42] բանաձևերը, Վրաստանի և Եվրոպական միության (ԵՄ) միջև կնքված «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագիրը[43], Պրահայում Արևելյան գործընկերության գագաթնաժողովի միացյալ հռչակագիրը[44], Վրաստանի և ԵՄ միջև ստորագրված ասոցացման պայմանագիրը[45]:

Վրաստանի քաղաքականության ուսումնասիրման համար օգտվել ենք նաև նրա երկրորդ նախագահ Է. Շևարդնաձեի հուշագրից[46], իսկ Ջավախքի շուրջ ստեղծված իրավիճակի ներկայացման համար օգտակար են եղել Վ.

---

[35] Georgia's application for membership of the Council of Europe - http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=16669&lang=en (17.01.2019).

[36] Parliamentary Assembly of the Council of Europe Resolution 1257 (2001) "Honouring of obligations and commitments by Georgia" - http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid =16941&lang =en(22.03.2019).

[37] Parliamentary Assembly of the Council of Europe Resolution 1415 (2005) "Honouring of obligations and commitments by Georgia" - http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid= 17288&lang=en(22.03.2019).

[38] Parliamentary Assembly of the Council of Europe Resolution 1428 (2005) "The situation of the deported Meskhetian population" - http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17312&lang=en (22.03.2019).

[39] Parliamentary Assembly of the Council of Europe Resolution 1477 (2005) "Implementation of Resolution 1415 (2005) on the honouring of obligations and commitments by Georgia" - http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17398&lang=en (22.03.2019).

[40] Parliamentary Assembly of the Council of Europe Resolution 1603 (2008) "Honouring of obligations and commitments by Georgia" - http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17629&lang= en (22.03.2019).

[41] Parliamentary Assembly of the Council of Europe Resolution 1801 (2011) "The honouring of obligations and commitments by Georgia" - http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid= 17976 &lang=en (22.03.2019).

[42] Parliamentary Assembly of the Council of Europe Resolution 2015 (2014) "The functioning of democratic institutions in Georgia" - http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=21275&lang=en (22.03.2019).

[43] Partnership and Cooperation Agreement (PCA) - http://smr.gov.ge/Uploads/2_Partner_cce01fcf.pdf (23.02.2019).

[44] Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit - https://www.consilium.europa.eu/media/31797/2009_eap_declaration.pdf (27.02.2019).

[45] Association Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and Georgia, of the other part - https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:22014A0830(02) (22.03.2019).

[46] **Шеварднадзе Э.,** Когда рухнул железный занавес. Встречи и воспоминания, пер. Г. Леоновой, Москва, «Европа», 2009.

Սարգսյանի, Գ. Նովիկովայի և Վ. Դաշկոյի աշխատությունները[47]: Մեսխեթցի թուրքերի հայրենադարձության մասին Վրաստանի իշխանությունների ընդունած օրենքի ուսումնասիրման համար օգտակար է եղել նաև Ս. Քեքսինի հոդվածը[48]:

Վրաստանի արտաքին քաղաքականության ուսումնասիրման համար արժեքավոր տեղեկություններ ենք ստացել նաև Բ. Մաիլյանի, Գ. Մաճավարիանիի և Զ. Բախտուրիձեի աշխատանքներից[49]: Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի որպես տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործոն ուսումնասիրության հարցում արժեքավոր են Ա. Շաքարյանի, Ա. Ղազինյանի, Ս. Քուրթի և Մ. Ուրենի հոդվածները[50]:

Մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձն ու այնտեղ արդեն հաստատվածների ինտեգրումն արգելակող հանգամանքների ուսումնասիրության համար օգտվել ենք Տ. Փուտկարաձեի, Ս. Սվերդլովի և Ա. Հարությունյանի աշխատանքներից, որոնցում հեղինակները մեծ մասամբ համակարծիք են առկա խնդիրների շուրջ[51]: Միայն Տ. Փուտկարաձեն առաջ է քաշում

[47] **Новикова Г. В., Дашко В. И.**, Самцхе-Джавахети: в эпицентре интересов, - Грузия: проблемы и перспективы развития, т.2, Москва, 2002; **Саркисян В.**, Джавахк в 1988-2008 гг., Ереван, Аналитический центр «Митк», 2009.

[48] **Keskin S.**, Ahıska Türklerinin Gürcistan'a geri dönüşü: 2007 geri dönüş yasası ve uygulamadakisorunlar, - Uluslararası Ahıska Türklerinin sempozyumu, Erzincan, 11-13 Mayıs, 2017, s. 405.

[49] **Маилян Б. В.**, Российско-грузинские отношения и вопрос членства Грузии в СНГ, - Научная конференция «Историко-культурные основы социально-политической модернизации», Ереван, Изд-во РАУ, 2012, с. 73-87; **Мачавариани Г. Г.**, Внешняя политика Грузии на Южном Кавказе (1991-2016гг.), Дис. канд. ист. наук, Российский университет дружбы и народов, Москва, 2017; **Бахтуридзе З. З.**, Внешняя политика Грузии в контексте развития международных отношений на постсоветском пространстве, Автореф. дис. док. пол. наук., Санкт-Петербургский государственный университет, Санкт-Петербург, 2016.

[50] **Шакарян А.**, Турки-месхетинцы: геополитический фактор в регионе, - Թուրքագիտա-կան և օսմանագիտական հետազոտություններ, IV, Երևան, «Ասողիկ», 2006, էջ 80; Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - https://regnum.ru/news/671851.html (10.01.2019); **Kurt S.**, Ahıska'nın Türkiye İçin Jeopolitik Önemi, - Karadeniz Araştırmaları, 2018, № 58, s. 198-2015; **Üren M.**, Çıkar ve Güç Dengesi Kıskacındaki Ahıska Türkleri Sorunu, s. 1-39.

[51] **ფუტკარაძე ტ.**, 1944 წელს სამხრეთ საქართველოდან დეპორტირებული მოსახლეობის შთამომავლების აღსანიშნავად გამოყენებული ტერმინები და დეპორტირებულთა შთამომავლების რეპატრიაციის პრობლემები, - ქართული მეცნიერება, 2015, № 19, გვ. 152-168; **Swerdlov S.**, Reflections on Transitional Minorities and Human Rights: Meskhetians and Hemshins in Georgia and Krasnodar, - Anthropology, Minorities, Multiculturalism, Krasnodar, 2004, Vol. 5, p. 5-26; **Հարությունյան Ա.**, Սամցխե-Ջավախքում թուրք մեսխերի /ահիսկա/ վերաբնակեցման

որպես մեսխեթցի թուրքերի հայրենադարձության նախապայման Աբխազիայի ու Հարավային Օսիայի հակամարտությունների կարգավորումն ու Սամցխե-Ջավախեթիում վրացերեն լեզվի դիրքերի ամրապնդումը:

Այսպիսով, բազմաթիվ աղբյուրների և փաստագրական նյութերի, XIX-XX դարերի և ժամանակակից ուսումնասիրությունների հիման վրա փորձել ենք վերլուծել և ներկայացնել մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Վրաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ հետխորհրդային ժամանակաշրջանում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

**ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տրված է ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «ՄԵՍԽԵԹՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ»**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Թյուրքախոս տարրերի ներհոսքը Սամցխե ու Ջավախք և տեղի բնակչության մահմեդականացումը»**, քննարկվում են մեսխեթցի թուրքերի ծագման երկու առավել տարածված՝ վրացական և թյուրքական վարկածները, որոնք դիտարկվում են Սամցխեում ու Ջավախքում թյուրքախոս տարրի ներհոսքի և տեղի բնակչության մահմեդականացման գործընթացների մասին հաղորդող տարաբնույթ աղբյուրների հետ համեմատությամբ:

Մինչև օսմանյան իշխանության հաստատումը նշված շրջանների բնակչության էթնիկ և կրոնական կազմի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք բնակեցված էին գերազանցապես հայերով ու վրացիներով: Օսմանյան տիրապետության հաստատումից հետո իշխող խավի ներկայացուցիչներն իրենց կարգավիճակը պահպանելու համար դիմեցին կրոնափոխության, ինչի հետևանքով սկսվեց շրջանի բնակչության մահմեդականացման գործընթացը: Ինչ վերաբերվում է թյուրքական տարրի ներհոսքին, ապա դրա մասին հստակ տեղեկություններ չեն հաղորդվում: Հաշվի առնելով, որ մինչ XIX դարի սկիզբը շրջանի մահմեդական բնակչությունն արդեն մեծ մասամբ թուրքախոս էր, կարելի է ենթադրել, որ այդ ընթացքում սահմանափակ թվով թյուրքախոս տարրի ներհոսք եղել է, որն էլ նպաստել է մահմեդականների շրջանում թուրքերեն լեզվի տարածմանը: XVIII-XIX դա-

---

խնդրի շուրջ, - Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, VI, Երևան, 2009, էջ 196-215:

րերի ընթացքում Սամցխեում ու Ջավախքում հաստատվել են փոքր թվով քոչվոր թյուրքախոս ցեղեր՝ թարաքամաներ (ղարափափախներ):

**Երկրորդ ենթագլխում՝ «Սամցխեի ու Ջավախքի բնակչության էթնոդավանական կազմը և ժողովրդագրական փոփոխությունները 1828-1944 թթ.»**, հանգամանորեն ներկայացվում են նշված շրջանում բնակվող էթնիկ և կրոնական խմբերը և Ռուսական կայսրության իշխանության հաստատումից մինչև 1940-ական թվականների սկզբի ժողովրդագրական գործընթացները: XIX դարի հետազոտողների ու վիճակագրական աղբյուրների հաղորդած տեղեկություններից պարզ է դառնում, որ մահմեդականները գերազանցապես բնակվում էին Սամցխեում, իսկ Ջավախքում նրանց թիվը չնչին էր: Այդ աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս նաև պատկերացում կազմել շրջանի մահմեդականների ինքնության խնդրի մասին: Նրա հիմքում, ինչպես և տարածաշրջանի այլ մահմեդականների մոտ, ընկած էր կրոնը: Այդ հանգամանքը Հարավային Կովկասում Ռուսական կայսրության վարած ազգային քաղաքականության հետ մեկտեղ նպաստեցին մահմեդականների ապաէթնիկացման (դեէթնիզացիայի) գործընթացի շարունակմանը:

ԽՍՀՄ ստեղծումից հետո, սկզբնական շրջանում Սամցխեի ու Ջավախքի մահմեդականները դիտարկվում էին որպես նոր ձևավորվող «ադրբեջանցիների» ներկայացուցիչներ: Այդ մոտեցումն արտացոլվել է նաև 1926 և 1939 թվականներին անցկացված մարդահամարներում նրանց նկատմամբ կիրառված անվանումների միջոցով:

**Երրորդ ենթագլխում՝ «Մեսխեթցի թուրքերի կազմավորման ավարտական շրջափուլը և նրանց ինքնության հարցը»**, քննարկվել է մեսխեթցի թուրքերի աքսորից հետո միջինասիական հանրապետություններում համախմբման և էթնիկ ինքնության ձևավորման փուլը: Միջինասիական ժողովուրդների շրջանում հայտնվելը, նպաստեց Սամցխեից ու Ջավախքից աքսորված բնակչության շրջանում էթնիկ ինքնագիտակցության բարձրացմանը: Աքսորավայրում քոչվոր թարաքամաների մեծ մասը սկսեց ձուլվել նախկին բնակության վայրերում նստակյաց կյանք վարող մահմեդականացած վրացիների, հայերի ու որոշ չափով ներգաղթած թյուրքախոս տարրերի հետնորդների հետ: Չնայած այդ ամենին, նրանց շրջանում մեկ ընդհանուր էթնիկ ինքնություն այդպես էլ չձևավորվեց:

Մեսխեթցի թուրքերի էթնիկ ինքնության մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար աշխատանքում դիտարկվել է նաև նրանց հանրույթի անվանումները, լեզուն, կրոնը և մշակույթը: Ներկայումս նրանց մեծ մասն ունի թուրքական ինքնություն: Վրացական ինքնություն ունեցողները կազմում են փոքրամասնություն: Թուրքական կողմնորոշման ամրապնդմանը նպաստում են նախ և առաջ կրոնը և լեզուն: Միաժամանակ, հարավկովկասյան և միջինասիական ժողովուրդների հետ շփման արդյունքում ձեռք բերված առանձնահատկությունները հնարավորություն են տալիս նշված հանրույթին դիտարկել որպես առանձին խումբ:

**Երկրորդ գլուխը՝ «ՄԵՍԽԵԹՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ»**, բաղկացած է երկու ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Մեսխեթցի թուրքերի աքսորը և դրա հետևանքները»,** ներկայացվում է մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի առաջացման պատճառները: Նախ և առաջ, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մեսխեթցի թուրքերը հայտնվեցին «անբարեհույս ազգությունների» թվում, իսկ 1944 թվականին խորհրդային իշխանությունները նրանց աքսորեցին Ուզբեկստան, Ղազախստան և Ղրղզստան: Վրաստանի հարավային շրջանների բնակչության արտաքսմանը վերաբերվող փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՎԽՍՀ իշխանություններն աջակցում էին այդ քայլին:

Միջինասիական հանրապետություններում բնակեցված մեսխեթցի թուրքերի շրջանում 1950-ական թթվականներին սկիզբ առավ իրենց նախկին բնակության վայրեր վերադառնալու շարժումը: Սակայն, ի տարբերություն բռնագաղթված ժողովուրդների մեծ մասի, մեսխեթցի թուրքերին Խրուշչովյան «ձնհալի» տարիներին չթույլատրվեց վերահաստատվել ՎԽՍՀ տարածք, իսկ Վրաստանի իշխանությունները ոչ պաշտոնապես առաջ քաշեցին մեսխեթցի թուրքերի կողմից իրենց վրացական ծագումն ընդունելու պահանջը: Դրա հետևանքով մեսխեթցի թուրքերի շարժումը պառակտվեց և ստեղծվեցին երկու հակառակ դիրքորոշումներ ունեցող խմբավորումներ:

Հիմնախնդրի նկատմամբ կենտրոնական իշխանությունների անտարբերության պայմաններում, այն կարգավորվելու փոխարեն, ավելի սրվեց Ուզբեկստանի ԽՍՀ Ֆերգանայի շրջանում տեղի ունեցած մեսխեթցի թուրքերի ջարդերի հետևանքով: Միայն դրանից հետո Մոսկվայում նրանց վերաբնակեցման հիմնահարցը ստացավ իրավական ճանաչում:

**Երկրորդ ենթագլխում՝ «Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը հետխորհրդային տարիներին»,** ներկայացվում է Ֆերգանայի դեպքերից հետո տարբեր երկրներում հաստատված մեսխեթցի թուրքերի համայնքների առջև ծառացած խնդիրները, որոնք էլ հանդիսանում են հիմնահարցի առանձին դրսևորումները: Նրանք առավել մեծ թվով խնդիրներ ունեն Ռուսաստանում, մասնավորապես Կրասնոդարի երկրամասում: Նշված խնդիրների թվին են պատկանում քաղաքացիության ձեռք բերման բարդությունները, հասարակությանն ինտեգրվելու դժվարությունները, իշխանությունների և տեղի բնակչության բացասական վերաբերմունքը և դրանցից բխող բազմաթիվ այլ իրավական և կենցաղային բնույթի խնդիրները: Այն երկրներում, որտեղ մեսխեթցի թուրքերը համեմատաբար լավ են ինտեգրվել հասարակությանը, գլխավոր խնդիրը ինքնության պահպանության հարցն է, թեև սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրներն այս կամ այն չափով առկա են նրանց բնակության վայրերի մեծ մասում:

Ենթագլխում քննարկվում է նաև մեսխեթցի թուրքերի հասարակական կազմակերպությունների դիրքորոշումները և ունեցած խնդիրները: Մեծ մա-

սը հիմնականում առաջ է քաշում Վրաստան վերադարձի պահանջը, մինչդեռ վերոնշյալ խնդիրների լուծմամբ, որպես կանոն, նրանք, թերևս, չեն զբաղված, ինչը պայմանավորված է նաև ֆինանսական միջոցների և համապատասխան մասնագետների սակավությամբ: Դեռ խորհրդային շրջանում առաջացած պառակտումը շարունակվում է մինչ օրս, ինչի հետևանքով մեսխեթցի թուրքերի լիազորները չեն գործում միասնաբար: Բացի այդ, նրանց միջավայրում բացակայում է որևէ գործող կազմակերպություն, որը լիիրավ ներկայացված կլիներ մեսխեթցի թուրքերի բոլոր համայնքներում:

**Երրորդ գլուխը՝ «ՄԵՍԽԵԹՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ»**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցի դրսևորումները»**, մանրամասն վերլուծվում է Վրաստանի իշխանությունների վարած քաղաքականությունը մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի նկատմամբ: Համադրելով մեսխեթցի թուրքերի հետ կապված պաշտոնական Թբիլիսիի ընդունած որոշումները նրա վարած արտաքին քաղաքականության, մասնավորապես եվրոպական միջազգային կառույցներին ինտեգրվելու գործընթացի հետ, ակնհայտ է դառնում, որ սկզբնական փուլում հիմնահարցը բարձրացվում էր միայն այն ժամանակ, երբ Վրաստանը նպատակ ուներ ներկայանալ Եվրոպայում՝ որպես արևմտյան արժեքներ կրող պետություն: ԵԽ անդամակցության ժամանակ մեսխեթցի թուրքերի հայրենադարձության պարտավորությունները ստանձնելուց հետո միջազգային կառույցների և Թուրքիայի ճնշման տակ ընդունվեց հայրենադարձության կազմակերպման մասին օրենքը, որը, սակայն ուներ բազմաթիվ թերություններ և, գործնականում, բացառում էր մեծ թվով մարդկանց Վրաստան տեղափոխվելու հնարավորությունը: Բացի այդ, Վրաստանը փորձում էր հիմնահարցի շահարկմամբ Եվրոպայից և Թուրքիայից նյութական օգուտ ստանալ:

Ներքին քաղաքականությունում մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը պաշտոնական Թբիլիսին շահարկում էր Ջավախքում իր դիրքերն ամրապնդելու համար: Խոսելով երկրամասում նրանց վերաբնակեցման մասին, Վրաստանի իշխանությունները փորձում էին զսպել ջավախահայության մշակութային ինքնավարության պահանջները: Սակայն գործնականում այդ սպառնալիքները չիրականացվեցին այն պատճառով, որ Թբիլիսիում գիտակցում էին մեսխեթցի թուրքերի Սամցխե-Ջավախեթիում բնակեցնելու արդյունքում երկրում և տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության չափազանց մեծացման և դրանից բխող հնարավոր բացասական հետևանքները:

2011 թվականին հայրենադարձության գործընթացի ավարտից հետո, Վրաստանի իշխանությունները հնարավորինս փորձում են շրջանցել հարցի քննարկումները, առավել ևս միջազգային հարթակներում:

**Երկրորդ ենթագլխում՝ «Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Վրաստանի հարևան երկրների շահերի համատեքստում»**, վերլուծվում և

բացահայտվում են Թուրքիայի, Ադրբեջանի, Ռուսաստանի և Հայաստանի շահերը՝ կապված մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի խնդրի հետ:

Թուրքիայի քաղաքականության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պաշտոնական Անկարայի համար մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը հանդիսանում է տարածաշրջանում իր աշխարհաքաղաքական շահերի իրականացման գործիքներից մեկն: Թուրքիայի իշխանությունները կողմ են արտահայտվում հենց Սամցխե-Ջավախեթիում մեսխեթցի թուրքերի հոծ բնակչություն ձևավորելու օգտին և դրանով իսկ փորձում ամրապնդել իրենց դիրքերը տարածաշրջանում: Այս ենթագլխում նաև հիմնավորվում է, որ Ադրբեջանի համար մեսխեթցի թուրքերին Սամցխե-Ջավախեթիում բնակեցնելը նախ և առաջ անհրաժեշտ է Հայաստանի և Արցախի նկատմամբ իր դիրքերն ամրապնդելու և ճնշումը մեծացնելու տեսանկյունից:

Թուրքիայի և Ադրբեջանի նման ծրագրերը ուղղակիորեն հակասում են Հայաստանի ռազմաքաղաքական շահերին և սպառնալիք են ներկայացնում նրա անվտանգությանը: Այս պարագայում Հայաստանի իշխանությունները պետք է աչալուրջ լինեն հիմնահարցի նկատմամբ և հնարավորինս խուսափեն մեսխեթցի թուրքերի Սամցխե-Ջավախեթի վերադարձից:

Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի հարաբերություններում մեսխեթցի թուրքերի հիմնահարցի արծարծումը ուսումնասիրելուց ակնհայտ է դառնում, որ այն պաշտոնական Մոսկվայի կողմից գերազանցապես օգտագործվում է Վրաստանի իշխանությունների նկատմամբ ճնշում գործադրելու համար: Ռուսաստանը նույնպես հանդես է գալիս մեսխեթցի թուրքերին Վրաստանում վերաբնակեցնելու օգտին, սակայն նրա համար ցանկալի չէ տարածաշրջանում Թուրքիայի դերի մեծացումը:

**Երրորդ ենթագլխում՝ «Մեսխեթցի թուրքերի հայրենադարձությանն արգելակող հանգամանքները»**, լուսաբանվում է մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի դեպքում առկա բազմաթիվ խնդիրները: Առավել մեծ նշանակություն է տրվում հասարակական բացասական կարծիքին հենց վրացիների շրջանում: Կարևոր խնդիրներից է նաև Վրաստանում և մասնավորապես Սամցխե-Ջավախեթիում առկա սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրները: Վրաստանում հաստատված մեսխեթցի թուրքերի հասարակությանն ինտեգրվելու խնդիրը նույնպես արգելակում է մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձին:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ** ներկայացված են ատենախոսության հիմնական եզրահանգումները.

- Մեսխեթցի թուրքերի կազմավորման թյուրքական վարկածի կողմնակից հեղինակների աշխատանքները Ադրբեջանում և Թուրքիայում տարածված պատմական ռևիզիոնիզմի քաղաքականության տրամաբանությամբ խեղաթյուրում են տարածաշրջանի պատմությունը: Այս հեղինակները թյուրքական ցեղերի արշավանքները հիմնականում ներկայացնում են որպես մեծաթիվ թյուրքախոս բնակչության ներհոսք, մինչդեռ այդ մասին վկայող որևէ հիմ-

նավոր փաստեր չկան: XI դարից սկսած թյուրքական որոշ բնակչություն կարող էր հաստատվել Սամցխեում, սակայն հաշվի առնելով ավելի ուշ շրջանի բնակչության կազմի մասին տեղեկությոյններ հաղորդող աղբյուր-ները, կամ նրանց թիվն աննշան էր, կամ էլ ժամանակի ընթացքում նրանք ինչ-ինչ պատճառով լքել են նշված շրջանը: Տեղի բնակչության մահմեդա-կանացման և թրքացման վարկածն ավելի լավ է մշակված և ընդհանուր առմամբ հենվում է բավականին մեծ թվով աղբյուրների վրա: Սակայն սույն տեսակետի գլխավոր թերությունը պարզեցված մոտեցումների մեջ է՝ բացառվում է թյուրքական ազդեցությունը մինչ XVI դարի վերջը, ինչպես նաև անտեսվում է օսմանյան շրջանում հնարավոր դեմոգրաֆիական տեղա-շարժերն ու թուրքերի ներհոսքը: Երկու տեսությունների կողմնակիցներն էլ հաճախ անտեսում են մեսխեթցի թուրքերի կազմավորման գործընթացում այլ էթնոսների մասնակցության հնարավորությունը, մինչդեռ աղբյուրներն ուղղակի կամ անուղղակի կերպով վկայում են այդ մասին:

- Աղբյուրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Սամցխեում ու Ջավախքում մինչև XVI դարի ավարտը բնակվում էին հիմնականում հայեր ու վրացիներ, իսկ մահմեդականները չնչին թիվ են կազմել: Օսմանյան տիրա-պետության հաստատումը հանդիսացել է ուսումասիրվող տարածքում նշա-նակալի ժողովրդագրական գործընթացների սկիզբ: Այս շրջանում տեղի է ունեցել բնակչության մեծ մասի մահմեդականացում: Հաշվի առնելով հայ-կական հոծ բնակչության առկայությունը, ակնհայտ է, որ նրանց մի մասը նույնպես ընդունել է մահմեդականություն: Կրոնափոխությունից հետո դավանանքով ինքնորոշվելը հանգեցրել է ազգակից քրիստոնյաների հետ կապի թուլացմանը: Տեղի է ունեցել նաև Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից և Պարսկաստանի հարակից տարածքներից գերազանցապես թյուրքախոս մահմեդական բնակչության ներհոսք: Աղբյուրների և տեղե-կությունների սակավությունը խոսում է ներհոսքի ոչ կազմակերպված և տա-րերային լինելու, ինչպես նաև, ոչ մեծ ծավալներ ունենալու մասին: Միևնույն պատճառով հնարավոր չէ պարզել կայսրության այլ շրջաններից ներթա-փանցած թյուրքախոս տարրերի և կրոնափոխ վրացիների ու հայերի տեսա-կարար կշիռը: Միայն առանձին աղբյուրների հաղորդած տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ նրանց մեծ մասն ունեցել են վրացական ծագում:
- Ռուսական կայսրության տիրապետության տարիներին իշխանություն-ների անհետևողական քաղաքականությունը նպաստեց մահմեդական բնակ-չության էթնիկ ինքնության կորստի գործընթացի շարունակմանը, ինչի արդյունքում նախադրյալներ ստեղծվեցին խորհրդային իշխանությունների կողմից նրանց «ադրբեջանցիների» կազմում ընդգրկելու համար: Վիճակա-գրական տվյալների վերլուծությունից երևում է, որ այդ մահմեդականների մոտ 1/3 մասը թյուրքախոս թարաքամաներն ու թուրքմեններն են կազմել, իսկ մնացած 2/3 մասը՝ դեռ օսմանյան շրջանում մահմեդականացած և

կայսրության այլ էլայեթներից ներգաղթածների որպես «յերլի» հայտնի խումբը, որոնց թվում դեռ կային վրացախոսներ:

- Մեսխեթցի թուրքերի կազմավորման և ինքնության ձևավորման տևական գործընթացը ավարտվել է միայն XX դարում: Տարբեր էթնիկ խմբերի մասնակցության հետևանքով մինչև այժմ նշված հանրույթի շրջանում իրենց ծագման վերաբերյալ միասնական մոտեցում չկա: Նրանց, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա շարունակում է միավորել կրոնը (մահմեդականությունը): Մեսխեթցի թուրքերի կազմավորման վերջին փուլում հետզհետե ավելի մեծ դեր սկսեց կատարել նաև լեզուն: Միավորող գործոններից է նաև ընդհանուր պատմական անցյալը՝ որի առավել կարևոր դրվագը աքսորն է: Այս ամենը նպաստեց մեսխեթցի թուրքերի մոտ թուրքական ինքնության ձևավորմանը: Սակայն վրացական, հայկական, միջինասիական մշակույթների ազդեցությունը, որով իրենք տարբերվում են Թուրքիայում բնակվող թուրքերից, նրանց մի մասին հիմք է տալիս դիտարկել իրենց՝ որպես առանձին, ուրույն հանրույթ:
- Հիմնախնդրի առաջացման ելակետ է դարձել ԽՍՀՄ իշխանությունների կողմից Վրաստանի հարավում բնակվող մեսխեթցի թուրքերի արտաքսումը: Խորհրդային իշխանությունների կողմից մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի և իրավունքների անտեսումը հանգեցրեց Ֆերգանայում նրանց դեմ ուղղված բռնություններին, ինչն էլ ստիպեց կենտրոնական կառավարությանը անհապաղ զբաղվել վերջիններիս հարցով: Միայն այս դեպքերից հետո ԽՍՀՄ իշխանությունները ճանաչեցին խնդրի իրավական կողմը, իսկ միջազգային հարթակներում այն քննարկվեց և ճանաչվեց միայն 1996-1999 թթ.: Միջազգային ատյանների կողմից հիմնախնդրի գոյության արձանագրմանը հետևեց նրա կարգավորման փորձը, որն էլ ներառեց 1999-2011 թթ. ընկած ժամանակահատվածը: Այդ ընթացքում խնդրին դրական լուծում չտրվեց և, որպես հետևանք, այն մինչ այժմ մնում է միջազգային դիվանագիտության և ազգամիջյան փոխհարաբերությունների օրակարգում: Ելնելով վերոնշյալից, մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը ընթացել է երեք փուլով՝ ա) աքսորից մինչև Ֆերգանայի դեպքերը, բ) ԽՍՀՄ-ի կազմաքանդման շրջանում, երբ ճանաչվեց ղեկավար օղակների կողմից և հետխորհրդային փուլը, գ) երբ դարձավ միջազգային հարթակում առարկա:
- Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ներկայումս այն բազմաշերտ է և իր մեջ ներառում է մի շարք կարևոր բաղադրիչներ՝ ներկա բնակության վայրերում հասարակությանն ինտեգրվելու, սոցիալ-տնտեսական և իրավական բնույթի խնդիրները լուծելու, ինքնության պահպանման և Վրաստան վերադարձի հարցերը: Վրաստանի պարագայում առաջնային է հենց հայրենադարձության հիմնահարցը: Հիմնախնդրի լուծման նպատակով ստեղծված մեսխեթցի թուրքերի կազմակերպություններից ոչ մեկը բավարար ազդեցություն և միջոցներ չունի շարժումը գլխավորելու համար: Նրանք

միասնական չեն նաև իրենց ընդհանուր նպատակին հասնելու հարցում, ինչը պայմանավորված է դեռ խորհրդային շրջանում շարժման պառակտմամբ: Հասարակական կազմակերպությունների ցածր արդյունավետության պատճառներից ենք համարում նաև այն, որ նրանք չունեն բավարար աջակցություն արտաքսվածների շրջանում, քանի որ ի վիճակի չլինելով լուծել առկա նյութական և սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրները՝ հիմնականում բարձրացնում են Վրաստան վերադարձի հարցը:

- Վրաստանի քաղաքականության մեջ մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի դրսևորումների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պաշտոնական Թբիլիսին այն օգտագործվում էր ի նպաստ արտաքին քաղաքական ոլորտում իրենց դիրքերի ամրապնդմանը: Միջազգային կազմակերպությունների օրակարգում հիմնախնդրի հայտնվելուց հետո Վրաստանի արտաքին քաղաքականությունն այդ հարցում կարելի է բաժանել երեք փուլի: Առաջին փուլում Վրաստանն իր հետաքրքրությունն էր ցուցաբերում խնդրի լուծման նկատմամբ ժողովրդավար և մարդու իրավունքների պաշտպանությամբ հետաքրքրված երկրի կերպար ստեղծելու և եվրոպական միջազգային կառույցներին անդամակցելու համար: Երկրորդ փուլում, արտաքսված բնակչության հայրենադարձության կազմակերպման պարտավարությունը ստանձնելուց հետո, Վրաստանի քայլերն աչքի ընկան դանդաղկոտությամբ և արհեստական բարդությունների առաջացմամբ, որի արդյունքում Վրաստան վերադառնալու իրավունք ստացան նախատեսվածից շատ ավելի քիչ թվով մարդիկ: Բացի այդ, այս փուլում Վրաստանի իշխանությունները ձգտում էին հիմնախնդրի շահարկման շնորհիվ ֆինանսական օժանդակություն ստանալ վերազգային կազմակերպություններից և միջազգային հարաբերությունների այլ սուբյեկտներից: Երրորդ փուլում, որը դեռ շարունակվում է, Վրաստանին հաջողվեց միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների օրակարգում թուրք մեսխեթցիների հայրենադարձության հարցը փոխարինել փոքրաթիվ հայրենադարձների ադապտացիայի հարցով: Իսկ ԵՄ ինտեգրման գործընթացում Վրաստանի իշխանություններին հաջողվել է շրջանցել այս խնդիրը:

- Վրաստանի ներքին քաղաքականության մեջ մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի դրսևորումները գլխավորապես նրա արտաքին քաղաքականության հետևանքն են: Բացի այդ, 2000-ական թվականներին պաշտոնական Թբիլիսին օգտագործում էր այս հարցը Ջավախքի հայության դեմ, մեսխեթցի թուրքերի բնակեցման սպառնալիքով, ինչի շնորհիվ կարողացավ ամրապնդել իր դիրքերը երկրամասում: Վրաստանը կարող է մեսխեթցի թուրքերին Սամցխե-Ջավախեթիում բնակեցնելով փոխել մարզի ժողովրդագրական պատկերը և թուլացնել հայկական բնակչության դերակատարությունը, սակայն գործնականում Թբիլիսին ձգտում է խուսափել նրանց Թուրքիայի հետ սահմանին մոտ բնակեցնելուց, գիտակցելով որ թուրքական ինքնություն ունեցող բնակչությունը կմեծացնի երկրի կախվածությունը Թուր-

քիայից և կարող են նույնիսկ պոտենցիալ սպառնալիք դառնալ երկրի տարածքային ամբողջականության համար: Վրաստանը պատրաստ է ընդունել միայն այն մեսխեթցի թուրքերին, որոնք ընդունում են իրենց վրացական ծագումը և տեղաբաշխում է տարբեր շրջաններում: Ակնհայտ է, որ Վրաստանի իշխանությունները օգտագործելով հիմնախնդիրը փորձում էին չափավորել ջավախահայության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և մշակութային ինքնավարության պահանջը:

- Հիմնախնդրի ուսումնասիրությունը Վրաստանի հարևան պետությունների աշխարհաքաղաքական շահերի համատեքստում վկայում է նրա կարևորության մասին: Թուրքիայի իշխանությունը փորձում է մեսխեթցի թուրքերին օգտագործել ինչպես երկրի արևելյան շրջաններում քրդերի դեմ, այնպես էլ պանթուրքիստական ծրագրերում: Նրանց Սամցխե-Ջավախեթիում վերաբնակեցնելով Թուրքիան զգալիորեն կամրապնդի իր դիրքերը տարածաշրջանում: Ադրբեջանին այդ հարցը գերազանցապես հակահայկական քաղաքականության համատեքստում է հետաքրքրում: Բաքվում հույս ունեն այդ կերպ Հայաստանը շրջափակել թուրք-ադրբեջանական ստվար բնակչության օղակով և օգտագործել դա՝ Արցախի հիմնախնդիրը իրենց համար բարենպաստ լուծելու համար: Ռուսաստանը հիմնահարցն օգտագործում է պաշտոնական Թբիլիսիի վրա ճնշում գործադրելու նպատակով, սակայն, միևնույն ժամանակ Թուրքիայի դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում տեղի կունենա ի վնաս Ռուսաստանի Դաշնության դիրքերի, ուստի պետք չէ ակնկալել, որ պաշտոնական Մոսկվան գործնական քայլեր կիրականացնի մեսխեթցի թուրքերի վերադարձի ուղղությամբ: Թեև դա մեծապես կախված է նրա Անկարայի և Թբիլիսիի հետ ունեցած հարաբերությունների բնույթից: Հայաստանի համար մեսխեթցի թուրքերի վերադարձը Սամցխե-Ջավախեթի պոտենցիալ վտանգ է պարունակում հայկական երկու պետությունների և ջավախահայության համար: Հաշվի առնելով մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի նկատմամբ Վրաստանի դիրքորոշումն ու վարած քաղաքականությունը, պաշտոնական Երևանը կարող է աջակցել նրան այս հարցում, ինչը կնպաստի երկու երկրների միջև հարաբերությունների ամրապնդմանը:
- Այսպիսով, վերոնշյալից պարզ է դառնում, որ Վրաստանի իշխանությունները մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցում շահագրգռված չեն և լրացուցիչ խոչընդոտներ են առաջացնում այդ խնդրի լուծման համար, պետք է նշել, որ կան նաև մի շարք օբյեկտիվ հանգամանքներ, որոնք նույնպես բարդացնում են հայրենադարձության իրականացման գործընթացը: Այդ հանգամանքներից ամենագլխավորը երկրի հասարակության բացասական վերաբերմունքն է մեսխեթցի թուրքերի հայրենադարձության նկատմամբ: Ընդ որում այդ հարցը անտեսելու պարագայում ավելի կարևոր է հենց վրացական հասարակայնության կարծիքը, քան Վրաստանի իշխանությունների կողմից որպես արգելք ներկայացվող հայության դիրքորոշումը:

Արգելքներից է, թերևս, Սամցխե-Ջավախեթիի նաև սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ում, միջինասիական երկրներում, Ադրբեջանում և Թուրքիայում հաստատված մեսխեթցի թուրքերը բավականին լավ են ինտեգրված հիշատակված երկրների հասարակություններում: Թուրքիայում, Ղազախստանում, ԱՄՆ-ում, ինչպես նաև որոշ չափով Ռուսաստանում ու Ադրբեջանում տանելի պայմաններում բնակվող մեսխեթցի թուրքերից շատերը դժվար թե ցանկանան թողնել ունեցածը և տեղափոխվել Սամցխե: Բացի այդ, ներկայումս մեսխեթցի թուրքերի մեծ մասն արտաքսվածների սերունդներն են, որոնք երբեք չեն եղել Սամցխեում և հոգեբանական կապվածությունն այդ տարածքի հետ այնքան էլ մեծ չէ: Հետևաբար, տարիներ անց մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հիմնախնդիրը կկորցնի իր նախկին կարևորությունը և կանհետանա քաղաքական ասպարեզից:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. The Meskhetian Turks' Issue in the Agenda of Cooperation between Georgia and International Organizations, Armenian Journal of Political Science, 2018, №1(8), pp. 103-119.
2. Մեսխեթցի թուրքերի ծագման հիմնական վարկածների վերլուծություն, Կրթությունը և գիտությունը Արցախում, Երևան, 2018, №1-2, էջ 57-63:
3. Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Վրաստանի և հարևան երկրների շահերի խաչմերուկում, Հայկական քաղաքագիտական հանդես, 2018, №2(9), էջ 93-126:
4. Մեսխեթցի թուրքերի կազմավորումը Սամցխեի ու Ջավախքի ժողովրդագրական շարժի համապատկերում, «Էջմիածին» հանդես, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 2018, ԺԱ, նոյեմբեր, էջ 118-133:
5. Политика Российской Федерации в Грузии в вопросе решения проблемы месхетинских турок, «Вестник» Российско-Армянского университета, Ереван, 2018, №3, с. 147-155.
6. Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Թուրքիայի քաղաքականության համատեքստում, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, 2019, հատոր X, №3, էջ 41-45:
7. Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի դրսևորումները Ռուսաստանի Դաշնության քաղաքականության և ռուս-վրացական հարաբերությունների համատեքստում, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, 2019, հատոր X, №4, էջ 40-45:

GALOYAN KARO A.

# THE ISSUE OF THE MESKHETIAN TURKS IN THE FOREIGN AND DOMESTIC POLICY OF GEORGIA IN THE POST-SOVIET PERIOD

The defense of the dissertation will take place at 12:00, on 8th of August, 2019, at the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History, International Relations" 07.00.02.

## SUMMARY

The PhD thesis is devoted to studying of the issue of the Meskhetian Turks and its influence on a number of decisions of Georgian authorities.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusions and bibliography.

In the introduction, the importance and relevance of the study is substantiated, its goals and objectives, scientific novelty, chronological framework, methodological basis are presented, and used sources and literature are analyzed.

The first chapter - "Review of issues of formation and expression of identity of the Meskhetian Turks", consists of three sections.

The first section analyzes two most common versions of the Meskhetian Turks' origin, which are considered in the context of sources reporting on the processes of intrusion of Turkic speaking population in Samtskhe and Javakheti and the muslimization of the local population.

The second section presents ethnic and religious composition of the region and demographic processes that contributed to the subsequent formation of a community of Meskhetian Turks in the period between 1828-1940. Sources of the XIX century indicate that the overwhelming majority of muslims in the region lived in Samtskhe and their number in Javakheti was insignificant. The same section mentions the desire of the Soviet authorities to include muslims of the region among the Azerbaijanis.

The third section deals with the issue of the ethnic identity of this group of people. The significance of the deportation factor of Meskhetian Turks to the formation of their modern identity is revealed, and in this context, there is mentioned the significance of their traditions, culture, language and religion.

The second chapter - "The emergence of the Meskhetian Turks' issue", consists of two sections.

The first section studies the main events that contributed to the emergence and exacerbation of the Meskhetian Turks' issue. In this regard, the most important events were the deportation to the Central Asian Soviet republics in 1944 and the Ferghana pogroms in 1989. The origin of the movement of the Meskhetian Turks for returning to Georgia is highlighted.

The second section presents political and legal issues of this ethno-religious group that it faced after the collapse of the USSR. The combination of those problems and the issue of repatriation to Georgia are the main components of the issue under study. This section also outlines the positions of social organizations of Meskhetian Turks and indicates the main directions of their activities.

The third chapter - "The the Meskhetian Turks' issue in the sphere of Georgia's domestic and foreign policy", consists of three sections.

The first section identifies the importance of this issue in the country's foreign policy, primarily in relations with influential international organizations, and its reflection in a number of government's actions inside the country.

The second section, reveals the positions and interests of the neighboring states in the matter of repatriation of the Meskhetian Turks to Georgia. Geopolitical interests of Turkey and Azerbaijan, which pose a threat to the interests of Armenia and Georgia, are emphasized. The position of the Russian Federation in this matter is discussed.

The third section presents the main obstacles that impede the final implementation of Georgia's commitments. A number of the main problems impeding the civil and cultural integration of the Meskhetian Turks in Georgia are indicated.

The main findings and results of the study are summarized in the conclusion.

ГАЛОЯН КАРО АШОТОВИЧ
# ПРОБЛЕМА МЕСХЕТИНСКИХ ТУРОК ВО ВНЕШНЕЙ И ВНУТРЕННЕЙ ПОЛИТИКЕ ГРУЗИИ В ПОСТСОВЕТСКИЙ ПЕРИОД

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - «Всемирная история, международные отношения». Защита состоится 8 августа, 2019 г., в 12:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

## РЕЗЮМЕ


Данное исследование посвящено изучению проблемы месхетинских турок и ее влияния на ряд решений властей Грузии.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

Во введении обоснована актуальность исследования, представлены его цели и задачи, научная новизна, хронологические рамки, методологическая основа, проанализированы использованные источники и литература.

Первая глава – «Обзор проблем формирования и выражения идентичности месхетинских турок», состоит из трех разделов.

В первом разделе анализируются две наиболее распространенные версии о происхождении месхетинских турок, которые рассматриваются в контексте источников, сообщающих о процессах проникновения тюркоязычного эллемента в Самцхе и Джавахети и мусульманизации местного населения.

Во втором разделе детально представлены этно-религиозный состав населения региона и демографические процессы, способствовавшие последующему формированию общности месхетинских турок, в период между 1828-1940-ыми годами. Источники XIX века свидетельствуют о том, что подавляющее большинство мусульман региона проживало на территории Самцхе, а в Джавахети их число было незначительным. В этом же разделе упоминается о стремлении советских властей включить мусульман региона в число азербайджанцев.

В третьем разделе всесторонне рассмотрены вопросы этнической идентичности данной группы людей. Раскрыто значение фактора депортации месхетинских турок на формирование их современной идентичности, а также упоминается в этом контексте о значении их традиций, культуры, языка и религии.

Вторая глава – «Возникновение проблемы месхетинских турок», состоит из двух разделов.

В первом разделе изложена череда событий, которые способствовали зарождению и обострению проблемы месхетинских турок. В этом отношении наиболее важнейшими событиями были депортация в центральноазиатские советские республики в 1944 году и ферганские погромы в 1989 году. Освещено возникновение движения месхетинских турок за возвращение в Грузию.

Во втором разделе изложены политико-правовые проблемы данной этнорелигиозной группы, с которыми она столкнулась после распада СССР. Их совокупность и вопрос репатриации в Грузию и являются основными составляющими изучаемого вопроса. В данном разделе также изложены позиции общественных организаций месхетинских турок и указаны основные направления их деятельности.

Третья глава – «Проблема месхетинских турок в сфере внутренней и внешней политики Грузии», состоит из трех разделов.

В первом разделе выявлено значение данной проблемы во внешнеполитическом курсе Грузии, прежде всего во взаимоотношениях с влиятельными международными организациями, и ее отражения в ряде мероприятий властей внутри страны.

Во втором разделе раскрыты позиции и интересы соседних государств в вопросе репатриации месхетинских турок в Грузию. Подчеркиваются геополитические интересы Турции и Азербайджана, представляющие угрозу интересам Армении и Грузии. Обсуждается позиция Российской Федерации в данном вопросе.

В третьем разделе перечисленны основные препятствия, помешавшие окончательной реализации взятых властями Грузии обязательств. Указан ряд основных проблем препятствующих гражданской и культурной интеграции месхетинских турок в Грузии.

В заключении подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.